ԿՅԱՆՔԸ՝ QR ԿՈԴՈՎ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԱՆՁՆԱԳՐՈՎ

DOI: 10.52174/2579-2989_2022.1-77

Սատանան այնքան սարսափելի չէ, որքան նրան նկարել են:

Ռուսական ասացվածք

Հիմնաբառեր. *կանաչ անձնագիր, QR կոդ, COVID-19, թվային գործիք, COVID-19-ի անձնագիր, COVID-19-ի վերահսկման միջոց, պատվաստանյութերի փոխճանաչելիություն, համավարակ*

Մեր օրերում հրամայական է դարձել COVID-19-ի հետ ապրելը, ինչը ենթադրում է կյանք՝ QR կոդով: Երկարատև սահմանափակումներից հետո, որոնք հղի էին ծանր ֆինանսական հետևանքներով, կանաչ անձնագիրը, որպես այս իրավիճակից դուրս գալու փրկօղակ հանդես եկող պատվաստումների տրամաբանական շարունակություն, զուտ թվային դարաշրջանին համապատասխան աշխատանքային գործիք է՝ COVID-19-ի վերահսկման գործընթացի կառավարումը հեշտացնող և համակարգող: Դրանում արտացոլված QR կոդն անձանց հետ կապված՝ COVID-19-ին առնչվող տեղեկությունների թվային ձևակերպումն է: Սակայն, կանաչ անձնագրի գործարկումը, ծրագրային առումով, անկատար է՝ պայմանավորված պատվաստանյութերի փոխճանաչման, ըստ երկրների՝ դրանց բաշխվածության անհավասարության և անմատչելիության հանգամանքներով: Մասնավորապես, ՀՀ-ում առկա է կանաչ անձնագրի և QR կոդի ընկալման խնդիր՝ կապված տեղեկությունների անմատչելիության և դրանց անհավասար չափով տրամադրման, մի խոսքով՝ իրազեկվածության պակասի հետ:

Կանաչ անձնագրի՝ որպես գործընթացը կարգավորող գործիքի կիրառումը կնպաստի սահմանափակումների վերացմանը և կյանքի բնականոն ընթացքի վերականգնմանը: Այս մասին է վկայում նաև այն երկրների փորձը, որոնք արդեն լիարժեքորեն հաղթահարել են կանաչ անձնագրի ընկալման բարդույթը:

Ոչ վաղ անցյալում մարդկությանը հայտնի էր անձնագրի մեկ որոշակի տեսակ, որն իր նշանակությամբ ոչ այլ ինչ էր, քան անձը հաստատող



Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

https://orcid.org/0000-0001-8888-045X

փաստաթուղթ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում բնական է անցումը համակարգչային տեղեկատվական բազաների վարման ինքնաշխատ համակարգերին, ինչը ենթադրում է թղթատար գործընթացների կրճատում, դրանց կատարման առավել արագ ընթացք ու ճշգրտություն: Ներկայում տիրող իրավիճակում էլ հնարավոր չէ կյանքը պատկերացնել առանց QR կոդերի, որոնք այս պահին, կարծես թե, փակ դռներ բացող «բանալիներ» լինեն:

Մեր օրերում, բացի անձը հաստատող փաստաթղթից, պահանջվում է ունենալ նաև COVID-19-ի տեսանկյունից կարգավիճակ ներկայացնող և հաստատող փաստաթուղթ, որի դերում հանդես է գալիս, այսպես կոչված, կանաչ անձնագիրը: 2021 թ.–ից նախ՝ սկսեցին շրջանառվել կանաչ անձնագրերի մասին լուրերը, այնուհետև դրանք դարձան իրողություն: Լինելով նոր, չբացահայտված կատեգորիա՝ ողջ մարդկության կողմից դրանք արժանացան բացասական ընդունելության: Ի սկզբանե մեծ էր անորոշության դաշտը, տեղեկությունները սակավ էին: Հնչում էին կարծիքներ, որոնք իրենց բնույթով առասպելանման էին՝ իբր այս ամենը քայլ առ քայլ մարդկությանը տանում է դեպի «չիպավորում» և այլն, և այլն:

Սակայն, կանաչ անձնագրերի թյուրընկալումն իրականում հանգեցնում է գործընթացների անհամակարգվածության, բարդացման և, ի վերջո, դրանք չեն ծառայի իրենց նպատակին:

Պարզ ընկալմամբ, կանաչ անձնագիրը թվային հավաստագիր է, որ համապարփակ տեղեկություններ է հաղորդում պատվաստված լինելու, թեստավորումների, ինչպես նաև ընթացիկ COVID-19 վարակով վարակվածության և առողջացման մասին: Կանաչ անձնագիր տալիս է առողջապահության նախարարությունն առաջին չափաբաժին պատվաստանյութը ստացած (երկրորդ չափաբաժինը ստանալուց 14 օր անց այն ամբողջությամբ դառնում է վավեր) կամ վարակված և առողջացած անձանց (կախված երկրից՝ 3-6-ամսյա ժամկետով), սակայն առողջացման կարգավիճակը նախատեսված է միայն ներքին օգտագործման համար: Այս գործիքի առավելությունն արագ և, ամենակարևորը, ներկա թվային ժամանակին համահունչ՝ առցանց ձևակերպման մեջ է: Այն հարմար է կիրառել, քանի որ հասանելի է ինչպես բջջային հեռախոսի հավելվածի միջոցով, այնպես էլ, ըստ անհրաժեշտության, թղթային տարբերակով: Կարևոր է նաև նշել այն հանգամանքը, որ կանաչ անձնագիրը չի ներառում դրա տիրոջ առողջության վերաբերյալ այլ տեղեկություններ: Ողջ տեղեկությունը վերաբերում է COVID-19-ին և զետեղվում QR կոդում:

QR կոդը տեղեկություն է անձի պատվաստման մասին, որը Հայաստանում գրանցված է բացառապես «Արմեդ» համակարգում (այլ երկրներում՝ իրենց ազգային համակարգերում): Եթե մարդը պատվաստվել է Հայաստանում, ապա նրա տվյալները միայն «Արմեդում» են: QR կոդը հնարավոր չէ կեղծել, այլ միայն սկանավորել՝ վավերացնելով մարդու պատվաստված լինելու հանգամանքը: QR կոդի հատուկ կոդավորած բանալին հասանելի է աշխարհում միայն տվյալ կազմակերպությունը, այս դեպքում՝ «Արմեդին», իսկ բացող բանալիները շատ են[1]:

Սակայն, կանաչ անձնագրի առկայությունը չի ենթադրում, որ նախկինում փակ բոլոր սահմանները բացվում են: Ունենալով կանաչ անձնագիր՝ կարելի է բախվել երկրների միջև պատվաստանյութերի փոխճանաչման խնդրին, որի դեպքում

[1] Պատվաստված քաղաքացիները խնդիրներ են ունենում Եվրոպայում. QR կոդի առեղծվածը, http://topnews.mediamall.am/?id=243594

անհրաժեշտ է անձնագրում ունենալ բացասական թեստի պատասխան արտացոլող QR կոդ:

Ելնելով աշխարհում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված իրավիճակից՝ կարող են փոփոխվել տարբեր երկրներ մուտք գործելու պահանջները*: Օրինակ, հնարավոր է՝ ընդունող երկրում տվյալ պահին գործի պահանջ, որի համաձայն, լինելով պատվաստված փոխճանաչված պատվաստանյութով, հավելյալ անհրաժեշտ լինի ներկայացնել նաև թեստի բացասական պատասխան: Այսպես՝ մեր հարևան Վրաստան մուտք գործելու համար պահանջվում է 72-ժամյա բացասական թեստ, սակայն եթե կանաչ անձնագրում առկա է այստեղ ճանաչված պատվաստանյութով պատվաստվածության հավաստում, այլևս անհրաժեշտ չէ 72 ժամ անց կրկին թեստավորվել, իսկ հակառակ դեպքում՝ պահանջը չկատարելու պարագայում, սպառնում է բավական մեծ տուգանք (2000 լարի, որը համարժեք է մոտավորապես 700 ԱՄՆ դոլարին):

ԵՄ երկրներով ազատորեն կարելի է ճանապարհորդել, եթե կանաչ անձնագիրը հավաստում է այժմ առկա պատվաստանյութերից AstraZeneca-ով (աշխարհում ամենափոխճանաչվածն է), Moderna-ով, Pfizer-BionTech-ով, Sinopharm-ով (որոշ վերապահումով) և այլ պատվաստանյութերով պատվաստվածության մասին (գծապատկեր 1):

Հետևաբար՝ կարելի է ասել, որ կանաչ անձնագիրը, նախևառաջ, ներքին օգտագործման փաստաթուղթ է, որը թույլ է տալիս շրջանցել երկրում գործող սահմանափակումները՝ հաճախել աշխատավայր, հանրային վայրեր և այլն: Եվրոպական որոշ երկրներում (օրինակ՝ Ֆրանսիայում) բժշկական հաստատություններ մուտք գործելու համար նույնպես պահանջվում է կանաչ անձնագիր՝ բացառությամբ ծայրահեղ դեպքերի:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Պատվաստանյութերի փոխճանաչումը երկրների կողմից՝ սահմանահատման ժամանակ[2]
(թվային արտահայտությամբ)

Աշխարհում կանաչ անձնագրի ներդրման կարևոր խոչընդոտներ են պատվաստանյութերի անբավարարությունն ու անհամամասնությունը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այս պահին ՀՀ-ն զերծ է նման խնդրից:

Քանի դեռ երկրները քննարկում են կանաչ անձնագրի լավ և վատ կողմերը, Իսրայելը ինչպես պատվաստման, այնպես էլ կանաչ անձնագրերի հարցում առաջիններից մեկն էր, որ ներմուծեց այս գործիքը, և կանաչ անձնագրի ինստիտուտն այստեղ լիարժեքորեն գործում է: Իսրայելում հասարակական վայրեր այցելելը, դպրոց գնալը կամ արտասահման մեկնելը հնարավոր է իրագործել միայն «կանաչ անձնագրի» կամ ՊՇՌ թեստի բացասական արդյունքի դեպքում[3]:

Կանաչ անձնագրերի ներդրման գործընթացում դրականորեն արձագանքող երկրների առաջնագծում Հունաստանն է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վերջինիս համար զբոսաշրջությունը ՀՆԱ-ի 20%-ն է, իսկ ոլորտում եկամուտների անկումը կազմել է մոտ 80%[4]:

Իտալիայում 12 տարեկանից բարձր անձանց արգելվում է լինել բարերում և ռեստորաններում, հասարակական միջոցա-

* Այժմ այս պահանջը վերանայվել է:

[2] Which COVID-19 vaccine is the most widely accepted for international travel?, 20.07.2021, https://www.economist.com/graphic-detail/2021/07/20/which- COVID-19-vaccine-is-the-most-widely-accepted-for-international-travel

[3] В бар по вакцинному паспорту. Как Израиль может стать моделью будущего мироустройства, 17.03.2021 https://www.bbc.com/russian/features-56337608

[4] Вакцинные паспорта. Станут ли они документом новой эпохи?, 16.02.2021г, https://www.bbc.com/russian/features-56034415

ռումներին, թանգարաններում, թատրոններում, լողավազաններում և մարզասրահներում: QR ծածկագրեր են պահանջվում նաև ներքին և միջազգային չվերթներից, միջքաղաքային և արագընթաց գնացքներից, միջքաղաքային ավտոբուսներից, ինչպես նաև միջմարզային նավերից օգտվելու և լաստանավեր նստելու համար: Միաժամանակ, օրենքն արգելում է, որ ձեռնարկություններում աշխատակիցներն աշխատեն առանց Green Pass-ի[5]:

COVID-19-ի անձնագրերի կիրառելիության նկատմամբ մոտեցումը տարբեր է Միացյալ Նահանգներում: Կալիֆորնիա, Կոլորադո, Հավայան կղզիներ, Իլինոյս, Լուիզիանա, Միչիգան, Մինեսոտա, Նյու Ջերսի, Նյու Յորք և Վիրջինիա նահանգներում կանաչ անձնագիրը գործում է: Ընդ որում, յուրաքանչյուր նահանգում այս առումով առկա են որոշակի նրբություններ[6]:

Օրինակ՝ Նյու Յորքի նահանգն ունի QR կոդով պատվաստման անձնագրային ծրագիր, որը հայտնի է որպես Նյու Յորքի բանալի, և դա ձեռք բերելու համար 12-ից բարձր տարիքի բնակիչները պետք է պատվաստվեն COVID-19-ի պատվաստանյութի առնվազն մեկ չափաբաժնով: Անցաթուղթն անհրաժեշտ է փակ տարածքներում սնվելու, սպորտով զբաղվելու և ժամանցային միջոցառումներին մասնակցելու համար (այցելություններ կինոթատրոններ, համերգային վայրեր, թանգարաններ, մարզահրապարակներ և այլն): Ընկերություններից պահանջվում է նաև ստուգել 12 տարեկան և բարձր տարիքի բոլոր աշխատակիցների ու հաճախորդների պատվաստման կարգավիճակը[7]:

Չինաստանում QR կոդերով անցագրերը գործում են 2020 թվականի ապրիլից: Առանց դրանց՝ բնակիչները չեն կարող այցելել հյուրանոց, ռեստորան, խանութ, մետրո կամ նույնիսկ բնակելի համալիր: Alibaba-ի և Tencent-ի մշակած հատուկ հավելվածները թույլ են տալիս գնահատել յուրաքանչյուր օգտատիրոջ վարակի վտանգը և, կախված դրանից, նրան նշանակել երեք գույներից մեկով QR կոդ: Կանաչ ծածկագիրը մարդուն տալիս է շարժման ազատություն, դեղինը նշանակում է մեկշաբաթյա ինքնամեկուսացում, կարմիրը՝ պարտավորեցնում գտնվել 14-օրյա կարանտինում: Միաժամանակ, կոդի գույնը կարող է արագորեն փոխվել, եթե, օրինակ, առողջ մարդն այցելի մի վայր, որտեղ գրանցվել է կորոնավիրուսի բռնկում[8]:

Ուսանելի է որոշ երկրներում գործող՝ COVID-19-ի վերահսկողության կոլեկտիվ իմունիտետային անձնագրերի փորձը[9]: Վերջինս նպատակ ունի վերահսկելու հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը, և պետք է ասել, որ դրական արդյունք է ապահովում վերջիններիս համար: Այն տրվում է որոշակի կազմակերպության միայն այն դեպքում, երբ աշխատակիցների 60%-ից ավելին կամ պատվաստված է, կամ վարակված է եղել COVID-19-ով վերջին 6 ամիսների ընթացքում, կամ տվյալ կազմակերպությունն ունի պատվաստման խիստ հակացուցումներով աշխատակիցներ (փոքր թվով): Պատվաստված աշխատակիցների տոկոսային շեմերը տարբեր են՝ 60-90%-ի միջակայքում: Միջազգային փորձում կոլեկտիվ իմունիտետային անձնագրերի առկայության դեպքում պատվաստվածության առավել բարձր տոկոսային շեմը 90% է, որը սահմանված է կրթական ոլորտի համար[10]:

Հասկանալու համար, թե ինչպես է կանաչ անձնագիրն ընկալվում Հայաստանում, իրականացրել ենք համացանցային հարցում և հարցազրույց 200 հոգու շրջանում՝ 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում: Ասենք, որ արդյունքները բավական հետաքրքրական են: Հարցազրույցին մասնակցել են հանրային սննդի օբյեկտների ներկայացուցիչներ:

---

[5] COVID-паспорта, зеленые пропуска и QR-коды. Как в разных странах контролируют граждан с помощью электронных сертификатов, 11.09.2021, https://lenta.ru/brief/2021/11/11/qrworld/

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

[9] Первый регион объявил о вводе паспортов коллективного иммунитета на, https://www.rbc.ru/politics/16/06/2021/60c9e1e09a79477752709d0f

[10] Նույն տեղում:

Հարցվողների ճնշող մեծամասնությունը (71,4%) լսել էր կանաչ անձնագրի գոյության և ներդրման մասին: Միաժամանակ, ավելի քան 21,4%-ը դրականորեն էր գնահատում այդ գաղափարը: Չեզոք դիրքորոշման պատճառը հիմնականում ոչ բավարար չափով տեղեկացված լինելն էր (գծապատկեր 2):

Հարցումը ցույց է տվել, որ կանաչ անձնագրի կիրառելիության վերաբերյալ լավ տեղեկացված են 31-45 տարեկանները: Հարցվածների 28,6%-ը (հիմնականում՝ 63 տարեկանից բարձր տարիքային շեմում գտնվողները) ոչինչ չէր լսել կանաչ անձնագրի մասին, ինչը վկայում է, որ տեղեկության աղբյուրն այս պարագայում հիմնականում եղել է համացանցը, իսկ հեռուստատեսությամբ և ռադիոյով դա բավարար չափով չի լուսաբանվել: Կանաչ անձնագրի մասին տեղեկության մատչելիության անհավասարությունն արդեն իսկ կարող է խնդիր դառնալ, քանի որ ՀՀ-ում սույն թվականի հունվարի 22-ից լիարժեքորեն ուժի մեջ է մտել միայն վերջինիս առկայությամբ հանրային շատ վայրեր մուտք գործելու պահանջը:

Դրական և բացասական վերաբերմունքը կանաչ անձնագրի վերաբերյալ գրեթե հավասարակշռում է: Այս իրողությանը դրականորեն են վերաբերվում հատկապես աշխատող հարցվողները՝ 31-45 և 46-63 տարեկաններ, որոնք դա ընկալում են որպես սահմանափակումներից զերծ մնալու միակ միջոց: Տեղեկացված հարցվողների 9%-ը (ավելի հաճախ՝ կանայք) դեմ է արտահայտվել նմանօրինակ անձնագրերի ներդրմանը, 57,1%-ն էլ (մինչև 18 և 63 տարեկանից բարձր մարդիկ) հայտնել է չեզոք դիրքորոշում, ինչի պատճառն այս պարագայում ևս նոր կատեգորիայի էության, հիմնական նպատակի դեռևս ոչ բավարար ընկալումն է: Նրանք, ըստ սեփական ընկալման, նշել են կանաչ անձնագրի ներդրման տարաբնույթ պատճառներ, որոնք խմբավորելով իմաստային առումով ավելի մեծ խմբերում, կարելի է առանձնացնել ավելի հաճախ հանդիպող հետևյալ մոտեցումները. ներդրվել է կորոնավիրուսի դեմ պայքարելու, քաղաքացիների պաշտպանության, սահմանների բացման, պատվաստված մարդկանց թվի հաշվառման և վիճակագրության, վարակիչ լինելը վերահսկելու համար: Բացասական ընկալումներն են՝ մարդկության չիպավորումը, ձևականությունը և, իհարկե, որպես անտեղյակության դրսևորում՝ COVID-19-ի հետ կապված ինչ-որ բան դիտարկելը, որը բավական հաճախ հանդիպող պատասխան էր: Մեծամասնությունն անտարբեր է այս ամենի նկատմամբ, քանի որ չի կարողանում օբյեկտիվորեն գնահատել իրավիճակը (գծապատկեր 3):

Հարցվողների դրական վերաբերմունքի հիմնական դրդապատճառներն են տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը, ինչպես նաև այն համոզմունքը, որ նման ձևով հնարավոր է կանխել վարակի հետագա տարածումը: Դրական տրամադրվածություն նկատվում է այն հարցվողների շրջանում, որոնք կողմ են ճանապարհորդությունների սահմանափակումների վերացմանը, և վերջիններս հակ-

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Կանաչ անձնագրի և QR կոդի հանդեպ ՀՀ քաղաքացիների տրամադրվածությունը

ված են հավատալու, որ կանաչ անձնագիրն ավելի արագորեն հնարավորություն կտա ճանապարհորդելու:

Կանաչ անձնագրի նկատմամբ դրականորեն տրամադրված անձինք պահանջում են հարգել իրենց կյանքը՝ խստորեն վերահսկելով չպատվաստվածներին: Բացասական վերաբերմունք է արտահայտել հարցվածների 8,3%-ը:

Միաժամանակ, հարցվողները բացասաբար են վերաբերվել կանաչ անձնագրին, քանի որ դա համարել են ձևականություն և պատվաստում հարկադրելու, ինչպես նաև իրավունքների, ազատությունների ոտնահարման, նման անձնագիր ունեցողների և չունեցողների միջև անհավասարություն սերմանելու միջոց: Բացասական վերաբերմունքի հիմքում հիմնականում պատվաստանյութի նկատմամբ անվստահությունն է՝ տարիների փորձարկում չունենալու պատճառով: Բացասաբար տրամադրված հարցվողները այս նոր գործիքի ներմուծման հիմքում փնտրում են ենթատեքստ և այն չեն դիտարկում որպես զուտ COVID-19 համավարակի վերահսկման միջոց:

Սակայն, հետաքրքրական է, որ թվային դարաշրջանի մասնիկ կազմող այս գործիքն առաջացրել է ծայրահեղ բացասական տրամադրվածություն, որի համաձայն՝ հարցվողների 3,9%-ը պատրաստ է սահմանափակելու շարժունակությունը՝ միայն թե կանաչ անձնագիր չունենա: Վերջիններս հակված են օգտվելու բացառապես էլեկտրոնային առևտրից, չհաճախելու հասարակական վայրեր, միայն թե չդառնան «չիպավորման» զոհեր: Այս իրավիճակն ակամայից հիշեցնում է 2004 թվականին սոցիալական քարտերի համակարգի ներդրման գործընթացը, որը նմանօրինակ տարաբնույթ ընկալումների պատճառ դարձավ՝ ընդհուպ համարվելով ազգակործան, մարդկության բնաջնջմանը սպառնացող վտանգ, սատանայական համարակալում և այլն:

Բացասաբար տրամադրված հարցվողները, հավատարիմ մնալով իրենց ընկալումներին, կանաչ անձնագիրը համարում են ոչ թե COVID-19-ի վերահսկման, այլ պատվաստվածության վերահսկման միջոց:

Անկախ կանաչ անձնագրի նկատմամբ բացասական և դրական տրամադրվածությունից, մեծամասնությունը, այնուամենայնիվ, դա դիտարկում է որպես սահմանափակումներից ազատվելու միջոց:

Ինչ վերաբերում է պատվաստանյութերի՝ ոչ բավարար ժամանակով փորձարկմանը, ապա պետք է նշել, որ, բժշկական տեսանկյունից, վերջիններս, որպես պատվաստանյութ հանդես գալու համար անցել են բավարար փորձաքննություն, մինչդեռ երկարաժամկետ փորձաքննության համար ահանջվում են երկար տարիներ: Կա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Կանաչ անձնագրերի և QR կոդերի ընկալումը ՀՀ-ում

նաչ անձնագրի կողմնակիցները դա դիտարկում են որպես տվյալ իրավիճակում ստեղծված հարմար գործիք, իսկ պատվաստումը՝ որպես մարդասիրական քայլ, հաղթանակ եսակենտրոնության դեմ, քանի որ այդ քայլով, նախևառաջ, կոտրվում է վարակի շղթան:

Հաջորդ խնդիրը, որ բացահայտեցինք հարցումների ժամանակ, կանաչ անձնագրի թյուրընկալումն է. շատերը համարում են, որ նման գործիքի կիրառումն անիմաստ է, քանի որ պատվաստված լինելը ոչ մի կերպ չի բացառում վարակվելու հավանականությունը: Այս պարագայում որպես պատվաստվածության գերխնդիր պետք է դիտարկել մահացության կրճատումը, ինչու չէ, նաև վարակի շղթաների՝ որոշ չափով կոտրումը, քանի որ բազմիցս արդեն ապացուցվել է, որ պատվաստվածությունը չի բացառում, բայց և այնպես, կրճատում է վարակի տարածումը: Այս համատեքստից ելնելով էլ՝ կանաչ անձնագրի հիմնական գործառույթը սահմանափակումներից ձերբազատումն է, քայլ առ քայլ անցումը բնականոն կյանքին:

Կանաչ անձնագիրը զուտ աշխատանքային գործիք է՝ գործընթացի կառավարումը հեշտացնող և համակարգող: Այստեղ կարևորը հանրության ճիշտ ընկալումն է և համապատասխան արձագանքումը: Կանաչ անձնագրի չեղարկումը յուրաքանչյուր պահի էլ հնարավոր է, ուղղակի դա կհանգեցնի համավարակի կառավարման բարձիթողի վիճակի՝ իր ծանր, մահացու հետևանքներով: Նման ձևով արգելքներ մտցնելով՝ հիվանդացությունը, գուցե, չի նվազի, բայց հնարավոր կլինի կրճատել մահացությունը, քանի որ պատվաստումներն ուղղակիորեն կրճատում են մահացությունը, այլ ոչ թե վարակվելու ռիսկը: Այսօր համավարակի վտանգը չափվում է ոչ թե վարակվածների, այլ ծանր հիվանդների թվով, որոնց ճնշող մեծամասնությունը պատվաստված չէ, և վերջնարդյունքը, ցավոք, մահն է: Պատվաստվածության տեմպերին համընթաց, որոշակի կայունացումը հուսադրող է, բայց դա հիմնավորում չէ հիվանդանոցների կամ առողջապահական այլ ոլորտների «բեռնաթափման»:

Նույնիսկ այն երկրներում, որտեղ գրանցվել են զանգվածային պատվաստումների ակնհայտ հաջողություններ, հիվանդացության օրական ցուցանիշը կարող է շատ բարձր լինել, և չնայած վարակի մակարդակի աճին, պատվաստվածների հիվանդության պատկերը, որպես կանոն, ծանր չէ, իսկ մահացության ցուցանիշները՝ հուսադրող:

Ուսումնասիրությունները վկայում են, որ վերակենդանացման բաժանմունքներում արհեստական շնչառական սարքերին միացվածների բացարձակ մեծամասնությունը չպատվաստված է: Ներկայիս իրավիճակում միակ լուծումը, ինչպես նաև գերխնդիրը ծանր հիվանդների թվի կրճատումն է, որը թույլ կտա ապրել, աշխատել COVID 19-ի ուղեկցությամբ՝ այնպես, ինչպես սեզոնային գրիպի վարակի պայմաններում: Այսպիսով՝ կանաչ անձնագրի՝ որպես գործընթաց կարգավորող գործիքի ընկալումը կնպաստի սահմանափակումների վերացմանը և բնականոն կյանքի վերականգնմանը: Այս ամենի մասին է վկայում նաև այն երկրների փորձը, որոնք արդեն հաղթահարել են կանաչ անձնագրի ընկալման բարդույթը:

Կանաչ անձնագրերն իրականում ազդարարում են ազատ տեղաշարժման իրավունքի և երկարատև սահմանափակումներից ձերբազատման կառուցակարգի գոյության մասին: Այժմ միակ խնդիրը համակարգի ներդրմանն ուղղված անհրաժեշտ բացատրական աշխատանքի պակասի մեջ է, որն էլ հիմք է դառնում հասարակության լայն շրջանակներում խուճապային տրամադրությունների առաջացման: Այս պարագայում պետությունը պետք է օգտագործի քարոզչամիջոցների մեծ հնարավորությունները՝ հանրությանը քաջատեղյակ պահելու սեփական իրավունքների և պարտականությունների մասին: Մինչդեռ պետական և մասնավոր ձեռնարկություններում ղեկավարության կողմից պարտադրանքի ու աշխատավարձ չվճարելու սպառնալիքի միջոցով համակարգի կայացումը հակառակ ազդեցություն է ունենում՝ խորացնելով անորոշության ու լարվածության մթնոլորտը: Իսկ ինչ վերաբերում է հանգամանալից բացատրության միջոցով քարոզչությանը, ապա դա մարդկանց կօգնի ըմբռնել նորարարության հնարավոր դրական ու բացասական կողմերը և, ըստ այդմ,

որոշում ընդունել: Այս պարագայում խնդրի լուծումը բացատրական անիմացիոն հոլովակների շրջանառման, ինչպես նաև համապատասխան գովազդային պաստառների տեղադրման, որոնք ուղղակիորեն կբացահայտեն QR կոդի և կանաչ անձնագրի առաքելությունը ու կնպաստեն մարդկանց շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Այժմ ՀՀ-ում նախատեսված է միայն անհատական կանաչ անձնագրերի համակարգը, բայց գործընթացի առավել կարգավորվածության համար ճիշտ կլինի նաև ներդնել կոլեկտիվ իմունիտետային անձնագրերի համակարգ՝ որպես երաշխիք նույնիսկ սահմանափակումների ժամանակ հանրային ծառայության ոլորտի կաթվածահար չլինելու: Ի դեպ, ճիշտ կլինի կոլեկտիվ իմունիտետային անձնագրերի շնորհման պատվաստվածության շեմի տոկոսային տարբերակումն իրականացնել ըստ ոլորտների:

Քանի որ այժմ սահմանափակումներից ազատվելու միակ ելքը պատվաստումներն են, իսկ դրանց հավաստումը՝ թվային և փաստաթղթային կանաչ անձնագրերը, հետևաբար՝ աննպատակահարմար է խուսափել դրանցից և արհեստականորեն բարդացնել արդեն իսկ բարդ իրավիճակը: Ընդդիմախոսները բարձրաձայնում են մարդու իրավունքների հնարավոր խախտումների, ինչպես նաև նման անձնագրերի կասկածելի արդյունավետության մասին, ուստի հանրամատչելի տեղեկությունների հաղորդումը տեղեկատվական զանազան միջոցներով հնարավորություն կտա հանրության լայն շերտերի համար բացահայտելու «կյանքը՝ QR կոդով» հասկացության առեղծվածը:

Եվ քանի որ մարդկությանը կառավարելու լավագույն միջոցը նրա վախերի կառավարումն է, ապա յուրաքանչյուր ոք, որքան հնարավոր է, պետք է կարողանա սեփական նախաձեռնությամբ ձերբազատվել անհիմն վախերից...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պատվաստված քաղաքացիները խնդիրներ են ունենում Եվրոպայում. QR կոդի առեղծվածը, 4.10.2021, http://topnews.mediamall.am/?id=243594
2. «Մենք թույլ չենք տալու ոչ մի ստուգողի, որ մտնի ռեստորանի տարածք և տուգանի հաճախորդին». Աշոտ Բարսեղյան, 19.01.2022, https://168.am/2022/01/19/1639095.html
3. Լինի տնտեսվարողը թե քաղաքացին, չի կարող տուգանվել տեսչական մարմնի կողմից. իրավաբան Օֆելյա Պողոսյան, 24.01.22, https://medmedia.am/?p=86602&fbclid=IwAR0qp-Jz538foMISS_m5Y1gSMZBgAuGON6-
4. Вакцинные паспорта. Станут ли они документом новой эпохи?,16.02.2021, https://www.bbc.com/russian/features-56034415
5. Психологический ковид, 14.01.2021, https://www.aviapages.ru/docs/284-psihologiches-kiy-kovid?
6. Как получить Зелёный пропуск, какие места работают по зелёному стандарту и актуальные рекомендации, https://corona.health.gov.il/ru/green-pass-lobby/green-pass-info/
7. COVID-паспорта, зеленые пропуска и QR-коды. Как в разных странах контролируют граждан с помощью электронных сертификатов 11.11.2021, https://lenta.ru/brief/2021/11/11/qrworld/
8. В бар по вакцинному паспорту. Как Израиль может стать моделью будущего мироустройства, 17.03.2021, https://www.bbc.com/russian/features-56337608
9. Financial Times узнала детали плана по ковид-паспортам в ЕС Ускорить их появление хотят страны с развитым туризмом, тогда как остальные настроены скептически, 04.03.2021, https://www.rbc.ru/politics/04/03/2021/60409af09a79470f826ccd38
10. «How to decode the Green Pass QR code», June 28, 2021, https://www.accuratereviews.com/come-decodificare-qr-code-green-pass/
11. Which COVID -19 vaccine is the most widely accepted for international travel?, 20.07.2021, https://www.economist.com/graphic-detail/2021/07/20/which- COVID -19-vaccine-is-the-most-widely-accepted-for-international-travel
12. https://168.am/2022/01/19/1639095.html
13. https://www.youtube.com/watch?v=2zwglfMyosY

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

ЖИЗНЬ С QR-КОДАМИ ИЛИ ЗЕЛЕНЫЙ ПАСПОРТ

В нынешней ситуации необходимо жить с COVID -19, а это значит жить с QR-кодами. После длительного периода ограничений, чреватых финансовыми последствиями, зеленые паспорта являются как логическое продолжение прививок для выхода из сложившейся ситуации. Зеленые паспорта — являются чисто рабочим инструментом цифровой эпохи, помощником в управлении процессами, инструментом контроля COVID -19. QR-код в зеленом паспорте — это цифровая обработка личной информации, связанной с COVID -19.

Однако реализация зеленых паспортов несовершенна с точки зрения программного обеспечения. Полноценному действию зеленых паспортов мешают взаимное признание, неравенство и недоступность вакцин. В частности, в Армении существует проблема с восприятием зеленых паспортов и QR-кодов из-за недоступности и неравенства информации. Таким образом, использование зеленых паспортов как инструмента регулирования процесса будет способствовать снятию ограничений и восстановлению нормальной жизни. Обо этом свидетельствует тот факт, что опыт стран, уже прошедших комплекс восприятия зеленых паспортов, вполне работоспособен.

Ключевые слова: *зеленый паспорт, QR-код, COVID-19, цифровой инструмент, COVID-19 паспорт, контроль COVID-19, распознавание вакцины, пандемия*

Tereza SHAHRIMANYAN
Administrator of the Amberd Research Center, ASUE

SECURITY AND CHALLENGES

LIFE WITH QR CODES OR A GREEN PASSPORT

In the current situation, it is imperative to live with COVID-19, which means living with QR codes. After a long period of restrictions, which were fraught with financial consequences, green passports appear as a logical continuation of vaccinations to get out of this situation. Green passports are a purely digital age-appropriate work tool: process management facilitator, coordinator, COVID-19 control tool. The QR code in the green passport is the digital processing of personal information related to COVID-19.

However, the implementation of green passports is imperfect in terms of software. Vaccination of vaccines, inequality of vaccines and inaccessibility hinder the full operation of green passports. In particular, in Armenia there is a problem of perception of green passports and QR codes due to inaccessibility of information: inequality.

Thus, the use of green passports as a tool to regulate the process will help remove the restrictions and restore normal life. This is evidenced by the experience of countries that have already undergone the process of perceiving green passports, and, as a result, proved to be fully operational.

Keywords: *Green passport, QR code, COVID-19, digital instrument, COVID-19 passport, control, vaccine recognition, pandemic*